«մէր հայը» կամ «Առաքէլի ապէրը», իրեն՝ ամուսնուն պարզօրեն «է՜յ» կամ «ա՜յ, հայ»[107]։

Իրավացի է Գ. Ֆ. Զուրսինը, երբ իր աշխատության մեջ այս սովորութական պահանջը բացատրելիս չի համաձայնվում այն հետազոտողների կարծիքի հետ, որոնք այդտեղ տեսնում են աղջկա առևանգման մնացորդներ և դրանից առաջացող փեսայի ու աղջիկների ծնողների միջև, մանավանդ զոքանչի հետ թշնամական հարաբերություններ[108]։ Այդ կարծիքը սխալ է այն պատճառով, որ դրանով անկարելի է բացատրել ոչ միայն այն, թե ինչու տղամարդը խույս էր տալիս իր կնոջ անունը տալուց նաև իր հոր և իր ընտանիքի անդամների հետ խոսելիս, որոնց թշնամանքը չէր կարող գրգռած լինել առևանգման ժամանակ, այլև այն, որ զոքանչի հետ, որը, ինչպես տեսանք նշանադրության մանրամասնությունները նկարագրելիս, փեսային առնում էր իր հովանավորության ներքո։ Անկարելի է բացատրել, թե ինչո՞ւ է կինը հեռևում այդ պահանջին ամուսնու ընտանիքում, որը միայն շահվել է առևանգումից և ոչ թե թշնամական, այլ հակառակ զգացմունքով պիտի վերաբերվեր նրան։ Սակայն անհնարին է հիմնավորված համարել և իրեն՝ Զուրսինի բացատրությունը, որը այդ սովորության պատճառը որոնում է ժողովրդի «կրոնական և մոգական հայացքների մեջ, այն է՝ իբր թե հարսը որպես օտար տոհմի մի անդամ իր հետ բերում է ամուսնու ընտանիքի մեջ մտնելիս նաև իր տոհմի ոգիներին, որոնք թշնամի են, օտար նրա ամուսնու տոհմի ոգիներին. եթե կինը սկսեր տալ ամուսնու և ընտանիքի անդամների անունները, նրան շրջապատող ոգիները կարող էին նրանց վնասել, որպես օտար տոհմի անդամների, և ընդհակառակը՝ եթե ամուսինը իր կնոջ անունը տար, նրա ընտանիքի, նրա տան ոգիները կիմանային, որ մի կողմնակի մարդ է մտել այդ տունը, և կարող էին նրան վնասել։ Իրար անունները չտալով թե՛ մեկը և թե՛ մյուսը նպատակ ուներ խաբել ոգիներին»։ Այս բացատրությունը անբավարար է, քանի որ աղջիկը հրաժեշտ տալով իր հայրական օջախին, ուրեմն և տոհմական ոգիներին, իր հետ չէր կարող բերել ամուսնու տունը իրենց տոհմական ոգիներին։ Անհիմն է նույնպես այն ենթադրությունը, թե երկու տոհմերի փոխադարձ թշնամական վերաբերմունքը շարունակվում է և այն ժամանակ, երբ այդ տոհմերը իրար հետ հաստատում են բարեկամական աղգակցական կապեր։ Երկու կողմերի ոգիների պայքարը սկեսրայրի ընտանիքում չի նկատվում ոչ մի այլ սովորության մեջ։ Ընտանիքում լինում էին մի քանի տներից եկած հարսներ։ Անկարելի է ենթադրել, որ մի կտուրի տակ, մի օջախի շուրջը, տեղի էր ունենում մի խճճված պայքար այդ տան ոգիների և հարսների հետ դրսից եկած ոգիների բազմաթիվ և բազմազան խմբերի միջև։

Ճշմարտությանն ավելի մոտեցած կլինենք, եթե այն ամօթը, որը թույլ չէր տալիս մարդուն և կնոջը ուրիշների հետ խոսելիս միմյանց ինտիմ, հատուկ անուններ տալ, բացատրենք նույն մտայնությամբ, որը թելադրում է ուրիշների, մանավանդ տղամարդկանց ներկայությամբ երեխային ձեռքիցը վայր դնել և կարծես ծածկել, որ դա իրենց զավակն է։ Միմյանց անունները տալով ցույց էր տրվում մարդու և կնոջ մեջ ամուսնական սեռական կապ հաստատված լինելը, նրանց մեղսակից հարաբերությունը, երեխան էլ որպես այդ մեխկի կոնկրետ ապացույցը։

---

107 Լալայեան Ե., *Սիսիան*, էջ 135, 136։

108 *Курсин Г. Ф.*, Նշված աշխ., էջ 241, 242։